


Թոյթ բռնած: Ձրի միւս կողմը երկու հրեշ-
տակ բռնել են Յիսուսի հազուատը:

Չորրորդ նկարը 250 բ քահանայաթաղն
է (պատկ. 6). մահճակալի վերայ պառ-
կեցրած է ննջեցեալը, որին սպիտակ կտաւով
պատել է մի քահանայ եւ կնգուղ անցրել
գլուխը. ինքն էլ թեքուած դէպի ննջեցեալը,
գրկել է նրան եւ բարձրացրել նրա իրանը:
Երկու ուրիշ հոգեւորական կանգնած են նրա




Պատկ. 7. Չեռ. էջմ. 969:

յետեւից. առաջինը քիչ առաջ թեքուած,
իսկ երկրորդը խաչակնքուած է: Պատկերի այս
մասը բնական է եւ կենցաղի հետ կապուած.
բոլորն էլ սցապէս կամ այնպէս դրազուած են
ննջեցեալով եւ բոլորին կապել է ննջեցեալին
թաղելու միտքը: Աւելի բարձր՝ Տէրն է
նստած աթոռի վերայ շքապատուած լու-
սով խաչակնքուած է, մի մի հրեշտակ կող-
քերից, որոնցից մէկը ննջեցեալի մանկան
կերպարանքով հողին է գրկել:

Բացի այս մանրանկարներից կան եւ

սկսուած քի դարդեր բուսական եւ երկրաչա-
փական մոտիւններով, ինչպէս եւ լուսանցքի
դարդեր, ծաղիկներ անօթի մէջ, մարդկային
դէմքեր միայն կինեվարիումով ուրուա-
գծուած: Նկարչի գոյներն առ հասարակ
վառ չեն եւ պայծառ. գործադրում է միայն
կարմիր, նարինջի եւ դորջ գոյները:

Նկարազարդուած է ոչ միայն ձեռա-
գիրը, այլ եւ կազմի մէջ առնուած կողմերը,
արտաքուստ (պատկ. 7 եւ 8). կազմարա-
բութեան արուեստի հետ կապուած մի
երեւոյթ էր սա էլ, թէեւ հազուադիւս. քն-
թերցողը տեսնում է մի կողմը փրկչի ան-



Պատկ. 8. Չեռ. էջմ. 969:

դրին, լուսոյ պսակով, աջով աւետարանը
կրծքին սեղմած, իսկ ձախը փորին դրած.
միւս կողմը մի ծաղիկ է երկու կողմից կան-
թաւոր անօթի մէջ: Երկուսն էլ շնորհքով եւ
գեղեցիկ, բայց արուեստից դատելով՝ ոչ
Ազթամարցու գործ, այլ, հաւանօրէն, վեր-
ջին կազմող Սահրաթ դպրի «ի թուարբու-
թիւն հայոց ՌճկԳ (= 1714)», տէր Մար-
գարէի եւ իւր կնոջ ստացմամբ:

ԳԱՐՅԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՍ ԵՈՎՍԷՓԵԱՆ

ԱՐՈՅ ԳԵՂԵՑԻԿ ՅՈՅՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Աններելի յանգանութիւն պիտի համա-
րուէր անշուշտ ըսելը թէ Պղատոնի «Հասա-
րակապետութիւն» գրքին Պրոտէ¹ եւ Նոյնին
«Խնջոյք» անունով սքանչելի երկախօսութեան
Պրոտէ կամ Պրոտէ ուղղագրական տարբեր ձեւե-
րով դիցարանական միեւնոյն դէմքը մասնանիչ
կ'ընեն մեղի: Աւերջինս յունական ծանօթ իշրուսն
է. եւ ստուգաբանօրէն յառաջ կը բերուի սո-
վորաբար յուն. ἔραον (= սիրել) կամ ἔραοις
(= սէր, տափանք) բառերէն: Սակայն միւս կող-
մանէ պէտք չէ նաեւ անտեսել, որ Պղատոն
«Խնջոյք»-ի մէջ Պրոտէ ի բոլորովին ուրիշ նկարա-
գիր տուած է. նկարագիր մը, որ շատ կը մեր-
ձենայ «Հասարակապետութիւն» գրքին
Պրոտէին:

Յատկապէս սիրոյ վրայ Պղատոն «Փե-
զրոս»-ի մէջ կը խօսի, մինչդեռ «Խնջոյք»-ի մէջ
Պրոտէ կը ներկայանայ մեղի աւելի իբր միջնէակ
մը մահկանացուներու եւ անմահներու
միջեւ, հեղինակ եւ անհաւատչեայ անմա-
նութեան: Միջնորդութիւն կ'ընէ Աստուա-
ծութեան եւ մարդկան միջեւ, հաղորդելով
մարդկան Աստուածութեան կամքը եւ
միջնորդելով Աստուածութեան մարդկան
սողօթքներն ու գոհերը: Աստուածներու եւ
մարդկան միջեւ կատարուած ամէն ըսն
կ'ըլլայ Էրոսի ձեռքով: Արդի է Պրոտէ (Պո-
րոտէ = բաղձանք) եւ Պենիայի (Πενία = աղ-
քատութիւն), անոր համար հօրը կողմանէ զօ-
րաւոր նսկայ որսորդ մըն է եւ ձգտող
բարոյն եւ գեղեցիկին. իսկ մօրը կողմանէ միշտ
աղքատ, կարօտ եւ զարգանալու ընդունակ:²
Այս պատկերը, որով Պղատոն Էրոսի էութիւնը
Սոկրատէսի բնորոշել կու տայ, շատ մեծ տար-
բերութիւն մը չունի մեր Պամփիլացւոյն նկա-
րագրէն, որ միջնորդ է Նոյնպէս մարդկան եւ
Աստուծոյ միջեւ եւ իր յարութեամբը նաեւ
առհասարակեայ անմահութեան: Խնջոյն ծան-
րակէտը բուն իսկ հոն է, որ Էրոս միայն Պղա-
տոնի քով այսպէս կը նկարագրուի: Զար-
մանալի չէ հետեւաբար, եթէ միտիմ ըսելու
թէ թերեւս Պամփիլացւոյն առասպելէն ինչ

ինչ գծեր անցած ըլլան Պղատոնի Էրոսին. որոշ
ծրագրով մը թէ անգիտակցաբար՝ երկրորդա-
կան խնդիր է: Հիմայ կը հասկցուի թէ ինչու
Քրիստոսէ յառաջ ՅԷ դարէն սագին Էրոսի եւ
Պսիխէի (Psyche) միջեւ, որ հոգւոյ դիցարա-
նական անձնաւորումն է եւ ծագած հաւանօրէն
ոչ առանց ազդեցութեան Պղատոնի փիլիսո-
փայական գրութեան, այնպիսի ներքին սերտ
յարաբերութիւն մը ստեղծուեցաւ, որ իր ամ-
բողջ ձգտումով սիրային է, բայց նաեւ սան-
դարամետական. եւ այս տեսակէտով Ադո-
նիսի եւ Ափրոդիտէի կամ Արոյի եւ Համիրամի
հետ գրեթէ միեւնոյն գծի վրայ:

Արդ Էրոսի առասպելին այս վերջին զար-
գացումը միայն Պղատոնով չի մեկնուիր. կային
ապահով ուրիշ ազդակներ ալ, որոնք թերեւս
շատ աւելի հին էին եւ իրենց ծագումով Նոյն
իսկ նախապատմական քան որ սովորաբար կը
կարծուի: Յոնական բանաստեղծներու սիրոյ
աստուածը, կ'ըսէ J. Boehlau¹, հին ընաստուած
(Naturgott) Էրոսին պատկերը միջագնաց: Իսկ
A. Furtwängler մինչեւ իսկ կը յայտարարէ թէ
Էրոսի ճաշակազիտականն ու սիրահարա-
կանը յետագայ դարերու գործ է²: Էրոս
անուան յուն. ἔραοις էն յառաջերութիւնն ալ
տակաւին լուծուած խնդիր մը չէ. Մ. Միւլլեր
զայն աղբրի մէջ կը գնէ սանակ. ar-vat կամ
ar-vas ի հետ, որ կը նշանակէ «վազող, սուրա-
ցող, արագահաս», Նոյն կարծիքն էն նաեւ
Mehlis եւ ուրիշներ³: Ինչպէս ծանօթ է, շե-
սիոգոսի համաձայն ամէն բանէ յառաջ միայն
քառու կար, ուսկից յառաջ եկան Գէա, Էրոս
եւ Տարտարոս. եւ ասոնց մէջէն ամէնէն նշանա-
ւորն ու հզօրը Էրոս էր: Այս վարդապետու-
թեան նոր երանգ մը տուին որփեականները,
որոնց կարծիքով ամենապարփակ խաւարէն՝ որ
հաւասար է քառուի, յառաջ եկաւ նախ Էրոս,
որ իր աստուածային ամենակերտ ուժով աշ-
խարհքս կազմեց եւ ձեւի բերաւ: Այսպիսի
նկարագրով բնաստուած մը ուշ թէ կանուխ
կրնար շատ դիւրաւ նաեւ մեռնելու եւ վերստին
կենդանանալու տեսագծերով ձոխանալ, վասն
զի իրմէ կազմուած բնութիւնն ալ ըստ նախա-
մարդուն բնահայեացքին շարունակ կը մեռնի եւ
կը վերակենդանանայ:

Ասիկա կ'աշխատի ապացուցանել J. Boeh-
lau իր վեր յիշուած յօդուածով: Ամենամեծ

¹ Այս մասին հմտ. նաեւ Lagarde, Geschichtliche
Abhandlungen, 168-170:
² Platonis Opera: C. E. Ch. Schneider, Parisiis,
ed DCCCXVI, հմտ. նաեւ Platonis sämtliche Werke,
Üb. H. Müller, Leipzig. XI. Bd. 1854, S. 270-336:

¹ Philologus, 1901, էջ 321:
² Roher I, 1339 ff.
³ Roher I, անդ:

փաստն է կալէ ատտիկեան հին սաւիրոյ մը (Δήχυθος), որ ներկայիս կասելի (Kassel) թանգարան կը գտնուի: Ասոր վրայ ամենանորը գծերով ներկայացուած է աստուած մը, որ իր ոսկեղէն թեւերը տարածած թուփերու մէջէն նոր դուրս ելող վարդի մը առջեւէն կը փախչի: Աստուածը ինք զինքը կը պաշտպանէ ձախ ձեռքով իր ոսկեճահուկ վերարկուն տարածելով, իսկ աչ ձեռքը պարպ է օդոյ մէջ, ուսկից սակայն սաւիրոյ մը նոր վար կ'իյնայ: Աստուածը առանձին չէ. ձախ կողմէն ապարանջաններով եւ կանացի զարդերով աղջիկ մը մազերը արձակած անձկօրէն օգնութեան կը փութայ աստուծոյն: Ճիշտ միեւնոյն եղանակաւ աչ կողմէն ալ կու գայ ուրիշ աղջիկ մը եւ կ'օտարած սաւիրոյ մը ձեռքը վարդին վրայ կը յարձակի: Արդ ըստ Boehlauի այս թեւաւոր աստուածը միայն Էրոս կրնայ ըլլալ, որ իբրեւ լուսոյ եւ կեանքի կամ գարնան աստուած ձեռքը ներկայացնող վարդէն կը սպաննուի, բայց գարնան միջոցին կը կենդանանայ նոր ուժով եւ նոր կենսունակութեամբ: Սաւիրոյ մեղէն ընծայածէն որչափ կարելի է եղբակացընել, Էրոս յաւերժահարսերու հետ ջուր բերելու գացած ատեն (Σιδών. Բորիմոս!) վարդը զօճ կ'երթայ: Pauly-Wissowa հանրագիտարանի մէջ Էրոսի վրայ գրող հեղինակը բաւական կասկածով կը վերաբերուի այս յառաջբերութիւններուն եւ կը բաղձայ ամբողջը աւելի Ադոնիսի դիցաբանական կեանքին մէկ զրուագը համարիլ: J. Boehlau յառաջուրէն արդէն կը մերժէ այսպիսի ենթադրութիւն մը սա պարզ պատճառաբանութեամբ (թէ սաւիրոյ շինութեան ժամանակները (Ք. յ. 5^{րդ} դարուն) ոսկեթեւերով միայն Էրոս կը ներկայացուէր, ոչ Ադոնիս եւ ոչ ալ ուրիշ աստուածներ: Այս մասին աւելին մեր նիւթէն դուրս է:

Արայի առասպելին ի նպաստ խօսող յունական վերջին վկայութիւնը կու տայ մեզի Պրուտաբոսի ընծայուած «Վասն գետոց եւ լեռանց» անունով շատ հետաքրքրական գործը, որուն իրապէս Պրուտաբոսի հեղինակութիւն ըլլալը թէեւ այսօր իրաւամբ չ'ընդունուիր, սակայն ծագումով շատ հին է եւ գրուած հաւանօրէն 9^{րդ} դարուն եւ կամ անկէ ոչ շատ ասդին: Հեղինակը սովորութիւն ունի գրել թէ բոլոր լեռներու եւ գետերու անուններուն առասպելական մեկնութիւն մը տալու. այս բախտին արժանացած են բնականաբար նաեւ Հայաստանի երկը մեծ գետերը: Թէ այս մեկնութիւնները ինչ աս-

տիճանի պատճառով տուեալներու եւ երբեմն ժողովրդական ըմբռնումներու կը համապատասխանեն, ի հարկէ համեմատական քննութեամբ միայն կարելի է իմանալ: Գժբախտաբար նոյնիսկ այս ձամբան բաւական դժուարութիւններու կապուած է, վասն զի մեր խնդրոյ նիւթ Պրուտաբոսը ոչ միայն ասդիէն անդիէն քովէ քով բերուած կարկատանք մըն է, այլ եւ՝ որչափ կ'երեւայ, բոլորովին ալ ազատ չէ անձնական յերիւրանքներէ եւ ինքնագիւտ մեկնութիւններէ: Այս է պատճառն, որ գիտնականները շատ զգուշաւոր են գրուածքս իբր աղբիւր գործածելու մէջ:

Սակայն հոս ալ չափ մը կայ, ուսկից անդէն անցնելու չէ գիտական ըսուած տարակոյր: Ասոր իբր փաստ թող ծառայէ Երասիս գետին նուիրուած հատուածը, որուն ինչ ինչ տողերը որչափ ալ սխալ համարուին եւ կամ մնան տակաւին անլուծանելի եւ թերեւս նաեւ կասկածելի բայց հոն առասպելներու ալ կը հանդիպինք որոնք անկասկած թանկագին մնացորդներ են հայ աւանդութեան մը եւ յատկապէս Արայի առասպելին համար մեծ նշանակութիւն ունին: Ահա հատուածին թարգմանութիւնը:

«Ա. Արաքսէս Հայաստանի գետ մըն է այսպէս անուանուած է Արաքսէս Պիւլոսի որդիէն: Վասն զի ասիկա իշխանութեան համար իր Արաքսէս պապին դէմ ելելով՝ զանիկա նետով սպաննելէն վերջ՝ երբ վրէժխնդրութեան աստուածներէ կը հալածուէր, Բախտոս գետը նետուեցաւ, որ անկից ըսուեցաւ Արաքսէս, ինչպէս կ'աւանդէ Կտեսիփոն իր Պարսկական պատմութեան մէջ: Արաքսէս Հայոց թագաւորը իր սահմանակից Պարսիկներու դէմ անգամ մը պատերազմ հրատարակեց, բայց կոխը դէտ չսկսած՝ պատգամէն իմացաւ, որ յաղթութիւնը կրնայ վաստակել, եթէ դժբախտութիւններէ ազատող աստուածներու երկու ազնուագոյն կուսաններ զօճէ: Թագաւորը իր զաւակներուն հայրական խանդաղատանքէն շարժած՝ խնայելի իր աղջիկներուն եւ հրամայեց որ իր հպատակներէն միոյն սերունդէն աչքի զարնող գեղեցիկութեամբ երկու կուսաններ զօճասեղան բերուին: Այս եղածին աղջիկներու հայրը Մնեսալէս անտարբեր սրտով տանիլ չկարենալով՝ ժամանակ մը անիրաւութեան լուց, բայց յարմար առթին թագաւորին աղջիկները սպաննելի եւ հայրենի հօրը թողած Սկիւթացիներու աչխարհը փախաւ: Արաքսէս երբ եղածը իմացաւ՝

աստիկ տրտմելով ինք զինքը Հալմոս (Ἄλμος) գետը նետեց, որ անկէ վերջ Արաքսէս ըսուեցաւ:

Բ. Հոն խոտ մը կը բուսնի, զոր տեղացիները իրենց լեզուով Արաքսա (Ἀράξω) կ'անուանեն, այսինքն՝ եթէ այս անունը թարգմանելու ընդէ՞ կուսաններ ատող պիտի նշանակեր, վասն զի քանի անգամ որ աղջիկներէ գտնուի, անմիջապէս արիւնը (հիւթը) դուրս տալով կը թարչամի:

Գ. Հոն կը գտնուի նաեւ սեւ գունով Սիկիոն կոչուած քար մը, որ երբ պատգամ ելէ, որ մարդկան մահ գուժէ, երկու կոյսերէ դժբախտութիւններէ ազատող աստուածներու խորանին վրայ կը դուրս, իսկ քահանան դանակով դպչելուն պէ՝ կը սկսի արեան առատ հոսանք մը, եւ այսպէս, ետոյ աւելորդապաշտական արարողութիւնը կատարողները մեծ աղմուկով եւ աղաղակներով կը հեռանան, թողլով քարը մէհեանին մէջ, ինչպէս կը պատմէ Գորոթէոս քաղաքացին իր քարերու վրայ գրած գրքին մէջ:

Դ. Անոր քով կայ Դիորփոս (Διορφο:) լեռը, այսպէս կոչուած երկրածին Դիորփոնէ, որուն մասին այս պատմութիւնը կը պատմուի: Մի՛հր բաղձալով որդի մ'ունենալ եւ կանացի սեռը առելուն՝ քար մը կը բեղմնաւորէ, որ յղանալով Դիորփոս անունով որդի մը կը ծնանի: Ասիկա երբ կը մեծնայ եւ կը զօրանայ, մեծամտօրէն Արէսոսը կոռուի կը զրգոէ, բայց անկից կը սպաննուի եւ այսպէս աստուածներու նախախնամութեամբ համանուն լեռան կը փոխուի՝:

Ե. Հոն նուննեոյ նման ծառ մը կը բուսնի, որ առատ պտուղ կու տայ եւ որոնք խաղողէ համուռնին: Այս աւելի կակուղ կեղեւով պտուղը հասունեցած պահուն՝ երբ մէկէ մը քաղուի եւ նոյն միջոցին Արէսոսը կոչուի, քաղուածը ձեռքին մէջ կը կանանչնայ, ինչպէս կ'աւանդէ Կտեսիփոն իր Ծառերու վրայ գրած ԺԳԴ գրքին մէջ՝:

Առաջին նայուածքին մ. ը. դ. կը զգայ արդէն, թէ անսովոր զարմանալիքներու եւ մասամբ նաեւ անյարիր դէպքերու կարկատանք մըն է հատուածս: «Արաքսէս Հայաստանի գետ մըն է», կ'ըսուի, բայց միւս կողմանէ անիկա իբր գետ կը նոյնացուի նախ Բախտոսի հետ՝ կցելով անոր

ոչ-հայկական առասպել մը, որուն համաձայն Արաքսէս յորջորջանքը Պիւլոս անունով մէկուն որդւոյն անունէն ծագած կ'ըլլայ: Ճիշտ միեւնոյն գետը յետոյ կ'անուանուի Հալմոս եւ Արաքսէս անունը այս անգամ իր գոյութիւնը կը պարտի համանուն հայ թագաւորի մը, որ իր աղջիկներու սպաննութեան վրայ զգացած ցաւէն ինք զինքը գետ կը նետէ: Հասկընալի է ուրեմն ըստ ինքեան, երբ Herscher, որ գրութեանս պատմական արժէքին մասին առ հասարակ շատ աննպաստ կը խօսի, այս ակնյայտի հակասութիւնը դիտումնաւոր կեղծիք մը կը համարի¹. ըստ իրեն կեղծուած է նաեւ Արաքսա ծաղկի անունը ինքնին իսկ Արաքսէս անունէն (անդ. էջ. 25, ծն. 27): Վերջնոյ հետազոտութեան անոր կցուած աւանդութեան ըստ մասին շատ անհաւատալի ըլլալը նկատելով՝ ես ալ սկիզբէն շատ կասկածով վերաբերուած եմ, սակայն հոն յիշուած հայ աղջիկներու ծաղիկ ժողովելու գեղեցիկ սովորութիւնը, որ մինչեւ այսօր գեռ կը շարունակուի հայ գիւղերու մէջ, պատճառ եղաւ, որ հայ բոյսերու աղբիւրները անգամ մըն ալ քննեմ՝ խնդրոյն գէթ հեռուոր լուծում մը գտնելու յուսով: Իմ թափած ամէն ջանքերս ապարդիւն եղան: Արաքսա անունով ծաղիկ մը հայ ժողովրդեան անձանօթ է եւ հաւանօրէն երբեք գոյութիւն ալ ունեցած չէ: Իսկ այն հակասութիւնը, որ կայ Արաքսէս անուան ոտուգաբանութեան առթիւ յառաջ բերուած երկու առասպելներու միջեւ, հաւանօրէն աշխարհագրական է միայն. կ'ուզեմ ըսել՝ հեղինակը իր աշխարհագրական սահմանափակ ծանօթութիւններով թերեւս եւ ոչ իսկ անդրագարձած էր այս հակասութեան: Herscher միտ չէ գրած, որ հիններէն ոմանց քով² Երասիս կը ծագի տաւրոսեան լեռներէն եւ Հայաստան ու Բախտրիաստան կտրելով՝ կ'երթայ կը թափի մինչեւ արեւելեան ըսուած ովկիանոսը: Ի հարկէ երկու առասպելներն ալ կասկածելի են իրենց բովանդակութեամբ. թողլով ուրիշ մանրամասնութիւններ, խնդիր է օր. համար թէ Հայերը ունէին արդեօք մարդազոհութիւն, թէ եւ խորենացին եւ ժողովրդական զրոյցները

¹ ὁς ἀκμάσας καὶ εἰς ἄμιλλαν ἀρετῆς τὸν Ἀθηπροκαλεσάμενος ἀνηρέθη. οὗτος κατὰ πρόνοιαν θεῶν εἰς δμῶντομον ὄρος μετεμορφώθη.
² Plut. De fluviiis ed. R. Herscher, Lipsiae, 1851, XXXIII. 1—V. 2^{ος} մաս. նաեւ ed. Philip. Jacob Maussacus, Tolosae, MDCXV, p. 79—83.

¹ Plut. անդ. Praefatio, էջ 27—28.
² Ստրաբոն ընդհանրապէս ճիշտ կը նկարագրէ գետին ընթացքը: Յետոյ աւանդութիւն մը յառաջ կը բերէ, որուն համաձայն Արաքսէս անունը ծագած կ'ըլլայ Մրմնոսէ, որ Արգոնաւորներու արշաւաբնի Յասոնի ընկերն էր՝ իր կարծիքով այս նոյնացման պատճառը Յունաստանի Պիւլոս գետն է, որ նոյնպէս Արաքսէս կ'ըսուի: Strab XI, 527, 530.

կը հաստատեն. բայց թէ հայ իշխան մը թագաւորին աղջիկները սպաննելէն վերջ՝ Սկիւթացիներուն երկիրը կը փախչի, շատ բնական է եւ ընդունելի: Սանտալճեան պէտք չի զգար տարակուսելու մինչեւ անգամ Հալմոսի պատմականութեան վրայ, զոր թեստադեայի Ալմոնի կամ Սալմոնի եւ Հալմոնիայի եւ Բէտվտիայի Ալմոն կամ Սալմոն քաղաքներու հետ կը համեմատէ, անով Հայերու եւ թեստադեան-թարակեան ազգերու ցեղակցութեան նոր փաստ մը գտած կարծելով¹:

Միակ առասպելը, որ հոս մեզի իրական ոտնկոխ մը կ'ընծայէ, հատուածին վերջն է, ուր խօսք կ'ըլլայ Դիորփոսի ծննդեան եւ մահուան մասին: Fr. Cumont իր Միհրի նուիրած կոթողական գործին² մէջ հետեւեալը կը գրէ առասպելի նկատմամբ. Il y a dans ce récit un souvenir de la naissance de Mithra ex πέτρας et du culte, dont les Arméniens l'honoraient, II. էջ 36: Վասն զի իր կարծիքով՝ Le récit de la naissance de Mithra est transporté à un prétendu fils du dieu, I. էջ 162, ծն. 3: Այս պատճառաւ ալ կեղծ-Պրոտարքոսի Դիորփոսի ընծայած դիցաբանական գետի մը քով ծնած ըլլալու տեսագիծը կ'ընդունի իբրեւ ճշմարիտ աւանդութիւն. միայն զայն Միհրի ծննդեան հետ կը կապէ ըսելով. Peut-être même chez les Arméniens localisait-on réellement la naissance du héros au bord de l'Araxe, անդ. ծն. 3: Ասկից կը տեսնուի, որ Cumont անգամ կեղծ-Պրոտարքոսի քննադատական արժէքին նկատմամբ առ հասարակ Herscherի հետեւելով հանդերձ չի խորշոր բնաւ առասպելս իբր աղբիւր գործածելէ: Եթէ Cumont Դիորփոսի մը դիցաբանական գոյութիւնը չ'ընդունիր, պատճառը վերջնականապէս իր Միհրի ծննդեան եւ դիցաբանական նկարագրին վրայ կազմած ըմբռնումն է: Սեռային տեսակէտով Միհրը իր աչքին նստելու հոգովեան կան շրջանին մաքուր էր եւ բարոյապէս բաւական բարձր մակարդակի վրայ. եւ երկրորդ՝ քարէ ծնած ըլլալու տեսագիծը ըստ իրեն Միհրի առասպելին սկզբնական տարրերէն էր, որ Հայաստանի եւ Կապադովկիոյ վրայէն անցաւ յառաջակողմեան Փոքր Ասիոյ ազգերուն եւ անկից մինչեւ Հռովմ: Իրականին Cumont երկուքն ալ գէթ

¹ Սանտալճեան, Histoire de l'Arménie, I, p. 151, ծն. 2.
² Textes et Monuments relatifs aux mystères de Mithra, Bruxelles, I—II, 1896—1899.

համոզել կերպով չէ կրցած ցուցնել: Առաջինը ցուցնելու եւ ոչ պէտք զգացեր է. ննթագրութիւն մըն է, որ սակայն առանց ազդեցութեան չէ մնացած իր գործին վրայ. իսկ երկրորդին համար միակ վտառակ ցուցումը, որ կը բերէ պարսկ. «ամամն», բառն է, որ թէ քար կը նշանակէ եւ թէ միանգամայն յարգութեան առարկայ երկինքը: Բայց երբ ասոր դիմաց դնենք Աւեստան, պարսկական միւս նուիրական գրքերը եւ առ հասարակ ամբողջ պարսկական հին գրականութիւնը, որոնց մէջ փոքրիկ ակնարկութիւն մ'իսկ չկայ Միհրի քարէ ծնած ըլլալու նկատմամբ, եւ միւս կողմանէ եթէ նկատենք նաեւ այն պարագաները, որոնց ազդեցութեան տակ Միհրապաշտութիւնը ծագում առաւ եւ տարածուեցաւ, այն ատեն շատ աւելի կը նուազի յառաջ բերուած ցուցման արժէքը: մանաւանդ որ եղածը Միհրի առասպելին աւելի մերձեցում է քան իրական ցուցում:

Քարէ ծնող աստուածներու բուն հայրերն յառաջակողմեան Փոքր Ասիան է: Այսօր ընդունուած պատմական իրողութիւնն է թէ Հռովմէացիները առաջին անգամ այս երկրին մէջ ծանօթացան Միհրի խորհուրդներուն, երբ Պոմպէոսի լեգեոնները շիման մէջ մտան իրենց մի պարտուած կիլիկեան ծովահաններու հետ, որոնք լեռներու քարայրներուն մէջ Միհրի խորհրդապաշտօնը կը կատարէին¹: Հոս է, որ Զեւսը՝ Ἄρχον լեռը կամ Ժայռը կը բեղմնաւորէ, ուսկից կը ծնանի Ἀρχισις կամ ըստ Արնոբիոսի (V. 5) Ἀρχοσ. քարէ ծնած է նոյնպէս կիլիկեան Միհրապաշտութեան Միհրը կը ներկայացուի սովորաբար փոխկալական զլիստներով եւ խոյրով. նոյն իսկ Հռովմայ մէջ ամենամեծ հանդիսութիւններով կատարուած իր խորհրդապաշտօնները ամենասերտ աղերսի մէջ էին Միհր մօր, այսինքն՝ Կիլիկիոյ պաշտօնին հետ. կ'ընդունանք մերթ Սաբաղիոսի Ատտիսի, մերթ պոնտական Մէն աստուծոյն հետ, որուն սիրտը հարն ու հոմանին էր իր լիտի պաշտօնով արդէն ծանօթ Մա դիցուհին: Ասոր համար է, որ Jean Réville² ասոնց եւ ուրիշ քանի մը կարեւոր կէտերու մեկնութեան մէջ փոքրասիական կրօններու Միհրապաշտութեան վրայ ըրած ազդեցութեան շատ աւելի մեծ նշանակութիւն կուտայ քան որ Cumontի քով կը տեսնենք: Նոյնը կարելի է ըսել նաեւ Wesendonkի համար

¹ Plut. Vita Pomp. 24.
² Etudes de théologie et d'histoire, publiées en hommage à faculté de Montsauban, Paris, 1901. էջ 336.

որ շատ աւելի յառաջ կ'երթայ եւ մինչեւ անգամ Միհրապաշտութեան մէջ կենդանական նշանակութիւն ունեցող Միհրի մարդկութիւնը փրկելու պաշտօնը իբրեւ այսպիսի ոչ-իրանեան կը հռչակէ¹:

Խնդիր չկայ, որ իրանեան է Միհրապաշտութեան հիմնական գաղափարը, որով Միհրի Արամազդայ եւ տեսանելի աշխարհի միջեւ միջնորդի դեր կը տրուի: Պրոտարքոս կ'ըսէ². ըստ Պարսիկներու ըմբռնման Արամազդ կ'իշխէ լուսոյ պայծառութեան մէջ այնչափ բարձր արեւէն, որչափ արեւը երկրէս հեռու է: Ահա միհրի միջին տեղը կը ըսնէ: Նոյն իսկ Աւեստայի մէջ կ'ընթեռնուի թէ Արամազդ Միհրը դրած է ամբողջ շարժող աշխարհի վրայ, զայն պահպանելու եւ վրան հսկելու համար³: Ահա միջնորդի այս հին գաղափարին կցուած են յետոյ մարդկան փրկիչ եւ հոգիներու առաջնորդ ըլլալու հայեացքները իրենց ամբողջ մանրամասնութիւններով, որոնց մէջ եթէ նաեւ պարսկական տարրեր կան, առնուած են անոնք պարսկական ուրիշ առասպելներէ եւ միհրապաշտական դրութեան յարմարցուած: Այս տեսակէտով շատ հետաքրքրական է Միհրապաշտութեան հոգիներու վարդապետութիւնը, որ յայտնապէս կ'ուսուցուի հոգիներու նախագոյութիւնը, որոնք ըստ Միհրապաշտութեան անսահման թուով գոյութիւն ունէին արդէն երկինքի մէջ, բայց ոմանք կամ դառն հարկէ ստիպուած կամ մարմնոյ մէջ դեւերու դէմ կուսելու համար մարմին առին: Եւ այսպէս՝ որոնք որ բարի կ'ապրին եւ չարին դէմ կը մաքառին, դատաստանէ վերջ Միհրի կողմանէ երկինք կ'առաջնորդուին, իսկ չարերը դեւերէն դժոխք կը տարուին: Բարի հոգին մինչեւ իր նպատակին հասնի, բաւական ճամբորդութիւն ունի դեռ ընելիք: Որովհետեւ երկինք եօթը միջնորդներու կը բաժնուի, որոնց իւրաքանչիւրը միջնորդի մը կը վերաբերի, հոգին որչափ միջնորդներէ անցնի, այնչափ աւելի զգեստներու պէս պիտի հանէ իրմէ այն կիրքերն ու պէտքերը, զորոնք մարմին առնելով ստացաւ: Լուսնոյ կը ձգէ իր կեանքի եւ մտնողի կարողութիւնը, Փայլածուին իր ընչասէր միտութիւնները, Աստղիկին իր զգայական ցանկութիւնները, Արեգական իր խելքի կարողութիւնները, Հրատի իր պատերազմական հոգին, Լուսնթագի իր

¹ Wesendonk, Der Urmensch էջ 143—151.
² Plut. De Isside et Ossiride, 46—47.
³ Yast, X, 103.

փառասիրական տենչերը եւ Երեւակի իր ծուրութեան եւ անգործութեան միտումը: Եւ այսպէս մերկ եւ զերծ ամէն պակասութենէ եւ զգայականութենէ՝ կը մտնէ Տրէ երկինքը, ուր կը բնակի բոլոր աստուածներուն գերագոյնը, որ կ'անուանուի Αιών, Κρόνος կամ երբեմն ինքնին բախտը¹: Հոս պղատոնական եւ սոււմերաբաբելական հայեացքներ միացած պարսկականներու հետ դիցաբանական գեղեցիկ պատկեր մը կը պարզեն մեր առջեւ: Գերակշիռը ի հարկէ պարսկական տարրն է², բայց երբ աչքերնիս դարձնենք Միհրապաշտութեան անգամ ընդունելու քսոմնեցուցիչ արարողութիւններուն, զգայացունց փորձերուն եւ արիւնային զոհերուն, առջեւին կ'ընթեռնուի գարձեալ Փոքր Ասիան իր կարծես կրօնական ամէն ազնիւ զգածում խղճող հոգիով եւ կերպարանքով:

Հետեւաբար որչափ ալ ճշմարիտ է թէ այն զոհերը, որոնք կապաղովկիոյ մէջ եղող մեզերը Միհրի կը մատուցանէին, իրենց մանրամասնութիւններով աւեստական արարողութիւնները կը յիշեցնեն, քանի որ հրոյ խորանին առջեւ միեւնոյն աղօթքները կ'ըլլային, միեւնոյն սուրբ խուրձը (baresman) ձեռքերնին, մեղրի, ձէթի եւ կաթի նոյն նուէրները եւ նոյն զոհութիւնը, որ զոհ 'ատուցանողին շունչը աստուածային հուրը չպղծէր — եւ այս պահպանողական հոգին մինչեւ Ս. Բարսեղի ժամանակները կար դեռ ինչ ինչ տեղեր³, միւս կողմանէ սակայն ան ալ ստոյգ է թէ քանի որ Միհրապաշտութիւնը իր ներկայ ձեւին մէջ խառնուրդ մըն է դիցաբանական բոլորովին այլազան հայեացք-

¹ Boussset, Die Himmelsreise der Seele (Archiv f. Religionsw.), 1906, էջ 160 ff. Cumont, անդ. I, էջ 309—310.
² Մտադիր կ'ընեմ մտորակներու ընծայուած դերին, ուսկից անուղղակի կերպով գուր կը ցայտէ նաեւ պարսկական այն հին հաւատքը, որով մարդկանց ընդհանրապէս շար ազդեցութիւններու հեղինակներ կը նկատուին, զեմ կարծեք թէ նախագոյ հոգիներու միհրապաշտական վարդապետութիւնը արդէնք ըստ ուղղակի Frava i ներու վարդապետութեան: Ինչպէս Jackson (Grundris der iranischen Philologie, Bd. II, էջ 674) կ'ըսէ: Պարսիկներու համաձայն մարդը հինգ հոգի ունէր. ա. ahū = հոգի, մտք, բ. daēna = խիղճ, կրօն, գ. baodah = զգացում, գիտակցութիւն, դ. urvan = հոգի, շունչ, ե. frava i = պահպանողական հոգի: Թէեւ H. Multon (Encycl of Rel. and Ethies, West. S. B. F. Bd. V, էջ 5, ծն. 2) եւ Scheffelowitz (Die altpers Religion, էջ 152) Fravašiiները իբրեւ երկնային անմիթական նախապարտ կը համարին եւ վերջերս զաստիճան հանուէր. Manesներու եւ հնդկ. Pitarahներու հետ կը համեմատէ, սակայն այն ստոյգ է, որ Fravaši մը միայն հաւատացեալ մը կրնար ունենալ եւ միշտ բարի նկարագրով կը մտածուէր: Հմտ. նաեւ Bartholomae, Altiranisches Wörterbuch, 991.
³ Epist. 238 ad Epiphanium. — Cumont անդ. I, 238.

ներու, արարողութիւններու եւ սովորութիւններու, ներեալ չէ կարծեմ բան մը իբրեւ Միհրի առասպելին սկզբնական տարր յայտարարել, երբ նոյնին նկատմամբ պարսկական աղբիւրներու մէջ բնաւ յիշատակութիւն չկայ: Այս կ'արժէ մանաւանդ փոխգիտի, Լիւդիայի, Լիւկաոնեայի, Գաղատիոյ, Ափրիկէի եւ ամբողջ Եւրոպիայի մէջ գտնուած յիշատակարաններու, ինչպէս նաեւ այս երկիրներուն հայող Միհրի պաշտօնին նկատմամբ աւանդուած ուրիշ գրաւոր տեղեկութիւններու մասին: Կապագովկիա միհրապաշտական ազգեցութեան այս նոր գտնիքն դուրս կը հանեմ, վասն զի շատ աւելի պահանջողական հոգի մը կը տիրէր հոն շնորհիւ մոգերու առանձին գասակարգի մը, որոնք հաւանորէն պարսկական ծագում ունէին:

Հայաստանի մասին կարծիքները այլազան ըլլալով հանդերձ՝ գիտնականներու մէջ գէթ այն ընդհանուր համաձայնութիւնը կայ, թէ Մագդալականութիւնը իր ազգեցութեան ամենազօրաւոր շրջանին իսկ չէ կրցած հայուն սրտէն ջնջել ազգային յատուկ կրօնն ու դիցաբանութիւնը: Այս կ'ընդունի մինչեւ իսկ Cumont¹, երբ կ'ըսէ. Հայերու կրօնը իրանեան եւ ազգային հաւատալիքներու խառնուրդ մըն է: Փաստերը բազմաթիւ են. ամենազօրաւորներէն է ապահով ինքնին իսկ Միհրի պաշտօնը: Թ. Աւդալբեկեան իր Միհրի վրայ գրած շատ հմուտ ուսումնասիրութեան սկիզբը² ցաւ կը յայտնէ, որ «Հայ հեթանոսական կրօնն ուսումնասիրողները կրակի ու արեւու աստուծուն-Միհրին շատ երկրորդական տեղ են յատկացնում հայ դիցաբանութեան մէջ», մինչ «Միհրի պաշտամունքը շատ մեծ տեղ է բռնել հայ հեթանոսական կեանքում»: Բայց Միհրի ընծայած այս նկարագիրը այնչափ ալ ճիշտ չ'երեւար: Ըստ Աւեստայի Միհր երկնային լուսոյ մարմնացումն է, որ՝ բնական է, հրոյ եւ արեւու հետ շփոթելու չէ երբեք, նոյնը պէտք է ըսել նաեւ մարդկան փրկչի եւ նման ուրիշ տեսագծերու մասին, որոնցմով ճոխացուած է Միհրի առասպելը շատ յետոյ՝ գլխաւորաբար միհրապաշտական ըսուած շրջանին³: Սակայն ինչ որ Աւդալբեկեան իբրեւ տրտուել հայ դիցաբաններու հասցէին կ'ուղղէ, իրաւացի է լիւրի: Այս կը տեսնուի ինքնին իսկ իր գործէն, զոր կարգացողը կատարելապէս համոզուած սրտի մը

ապահովութեամբ կը ստիպուի ինքն ալ ըսել, «որ Միհրի պաշտամունքը շատ մեծ տեղ է բռնել հայ հեթանոսական կեանքում», եւ գարձեալ թէ «Հայ դիցարանի (պանթէոն) ոչ մի աստուած այն հետքեր չէ թողել հայ անձնանունների բառաբերում, որքան հուր արեւ Միհրը» էջ 3: Միհրի պաշտօնը տարածուած էր Հայաստանի բոլոր գլխաւոր նահանգներու մէջ. յիշատակութեան արժանի են մանաւանդ Ասպուրական, Տարօն եւ Բարձր Հայք: Ի՞նչ ամենանշանաւոր մեհենատեղին էր Բագայառիճ գիւղաւանը, ուսկից Պրոֆ. Մարկուարտ կը մտի կարծելու թէ Միհր Հայաստանի մէջ նաեւ Բաագա կ'անուանուէր⁴: Գժբախտաբար անդրագոյն վկայութիւններ կը պակսին այս մասին. եթէ ստուգուի Պրոֆ. Մարկուարտի կարծիքը, այն ատեն հայ դիցաբանութեան մէջ Միհրի դերը իրաւամբ նշանակալից կ'ըլլայ: Ասան զի արիական ժողովուրդներու քով ըսագա սովորաբար գերագոյն էակին անունն էր. իբրեւ այսպիսի գործածուած է նոյն իսկ օտար համարուած ազգերէ. այսպէս Բաագա-Տեղուք, որ Հատերու գէթ մէկ մասին գերագոյն աստուածն էր եւ կամ Բաագա-Բարտում⁵, որ դիցուհի մըն է եւ կին Ուրարտացիներու խալաթ գերագոյն աստուծոյն:

Միհրի պաշտօնը Հայաստանի մէջ վաղուց մուտ գտած էր եւ թերեւս Արեւմտեան շրջանին Պարսիկներու Հայաստանի տիրելէն ալ յառաջ: Ասան զի մեր մտադրութենէն վերայելու չէ երբեք պատմական այն մեծ իրողութիւնը, թէ Քրիստոսէ յառաջ 1450ական թուականներուն Հատերու հետ դաշինք դնող Հարրինները, որոնք իրենց հաւատարմութեան վկայ կը կոչեն Վարունա, Միտրա եւ Նաշատիա աստուածները, մեր այժմեան Հայաստանը կը ընակէին, եւ դժուարաւ թէ Հայաստանէ գաղթած ըլլան առանց հոն Միհրի պաշտօնէն հետք մ'իսկ ձգած ըլլալու: Զրադաշտական մազդականութեան Պարսիկներու կողմէն յուսացուած չափով Հայաստանի մէջ մուտ չգտնելուն գլխաւոր պատճառներէն մէկն ալ թերեւս այն էր: Թէ Մագդալականութիւնը իր ամենասկզբնական շրջաններուն նկարագրով եւ իր մէջ տիրող ձգտումով աւելի բազմաստուածեան էր՝ ինչպէս

¹ Untersuchungen zur Geschichte von Eran I, էջ 132:
² Հմմտ. նաեւ Wesendonk, Zarathustra, էջ 371:
 Jensen, Wiener Zeitschr. für die Kunde des Morgenlandes, VI, էջ 70:

¹ Անդ. էջ 233 եւն:
² Միհր Հայոց մէջ. Աղ. Ման. ՃԻ, էջ 1:
³ Wesendonk, Zarathustra էջ 26-27:

ումանք կը կարծեն¹, թէ երկարմատեան կամ միաստուածեան (Աեսեդոնկ), մեղի համար կը մնայ առ այժմ երկրորդական խնդիր: Հայ մագդալականութեան մէջ աչքի զարնող երկու շատ նկարագրական երեւոյթներու կը հանդիպինք, որոնցմէ զուրկ է բացարձակապէս պարսկական Մագդալականութիւնը: Հայերը Արամազդ, Միհր եւ Անահիտ մեհենաներու մէջ կուրքերու կերպարանքի տակ կը պաշտէին, եւ երկրորդ այս աստուածները Հայերու քով ոչ միայն պարզ սեռօրէն կը մտածուէին, այլ եւ իրարու հետ ծննդական աղերսի մէջ կը դուռէին. Անահիտ Արամազդայ դուստր, իսկ Միհր որդին կը համարուէր: Պարզ է թէ ասով մեծ վնաս մը կը բացուի հայ եւ պարսկ կրօններու միջեւ: Հետեւաբար սխալ է բոլորովին իրանեան հայեացքներով եւ աղբիւրներով հայկական դիցարանի Միհրը ուսումնասիրել եւ անոր նկարագիրը բնորոշել: Պարսկական աղբիւրները օգնական ազգակներ միայն կարող են ըլլալ, ուրիշ ոչինչ:

Այս կէտը շատ կարեւոր է կեղծ-Պրոտոտարբոսի Գիորփոսի նուիրած հատուածիկը ճիշտ հասկընալու համար: Եթէ Միհր շատ բարձր դերը կը վայելէր հայ աստուածներու մէջ, որոնք առ հասարակ ծննդական աղերսներով իրարու հետ կապուած էին, ինչիւրը նոյն իսկ յառաջագունէ միայն նկատելով՝ զարմանք է, եթէ հին գրական աշխարհէ լսելի ըլլան մեր ականջին նաեւ ձայներ, որ հայ Միհրի որդի մը կը վերագրեն: Զմեղ պէտք չէ խրաչեցընել ծննդեան անսովոր եղանակը, որ Ագաթանգեղոս ժայռէ ծնունդը կը յիշեցընէ. ուսկից տարուելով Տոմաշէկ Գիորփոսի ծնունդը փոխաբանէն կազմուած գրական յերիւրանք մը կը համարի²: Բարեբախտաբար ասիկա Միհրի բարոյական նկարագրին դպչող առաջին անսովորը չէ: Ս. Յերոնիմոս³ պարապ տեղ չէր գրեր թէ «Narrant et gentiliū fabulae Mithram et Erichthonium vel in lapide vel in terra de solo aestu libidinis esse generatos»: Եղինկ եւ Եղիշէ⁴ իրենց ընթերցողներուն հասկըցընել կ'ուզեն թէ Միհր ծնած է հօրը իր իսկ մօր հետ տածած յարաբերութենէ: Cumont հայ մատենագիրներուս աւանդածին ազգային

¹ Cumont, անդ. էջ 6 եւն. — Meillet, Grammaire du vienn Perse էջ 8:
² Roscher, Diorphos:
³ Migne Pl. XXIII. Adv. Jovinianum, էջ 303:
⁴ Եղիշէ. Վենետիկ 1828, էջ 53, 58:

աղբիւրներէ ըլլալուն վրայ տարակուսելով ամբողջը թէոգորոս Մոպսուեստացիէն առնուած օտար ապրանք կը բաղձայ համարիլ¹: Որոշ չափով ազգեցութիւն մը կարելի է ընդունիլ: Եղինկի, բայց մանաւանդ Եղիշէի պարսկական կրօնին հայող նիւթերու մէջ ասորական աղբիւրներէ օգտուիլը ցուցուած է, ուսկից բնականաբար բացարձակ կախում մը կամ ուրիշ խօսքով հայ հողի վրայ նման հայեացքներու ամբողջական բացակայումը տակաւին չի հետեւիր: Այս ամբողջ խնդրոյն մէջ նշանակալիցը Միհրի ծննդեան նկատմամբ նման հայեացքներու առ հասարակ գոյութիւն ունենալն է. թէ աւանդողը հայ մըն է թէ հայուն եւ պարսկին դրացի ասորի մը՝ խնդիրը չի փոխեր:

Գիորփոսի առասպելին ի նպաստ խօսող գրական ամենամեծ վկայութիւնը հայ Միհրի առասպելն է: Այսօր այլ եւս ցուցուած պէտք է համարիլ թէ հայ Միհրը Միհրի հետ նոյն է: Ինծի որչափ ծանօթ է ասոր առաջին անգամ անդրադարձած է Ստ. Կանայեանց², որուն հետեւած է Թ. Աւդալբեկեան³ եւ ուրիշներ: Ի հարկէ խօսքը հայ հողի վրայ դարբերու ընթացքին զանազան ազգեցութիւններու ենթարկուած Միհրի վրայ է, որ խաւարն ու դեւերը հալածող իր սկզբնական նկարագիրը առանց կորսնցընելու՝ ժայռի մը կամ լեռան մը մէջ փակուող հերոսի աստիճանին իջած է եւ ասով յատկապէս շօշափելի գծեր կ'ընձեռէ մեզի համեմատելու համար զնքը միհրական Գիորփոսի հետ, որ նոյնպէս լեռան մը մէջ կը մտածուի կամ լեռան մը փոխուած է կ'ըսուի. երկու տեսագծերն ալ դիցաբանօրէն իրարմէ շատ տարբերութիւն չունին: Գիորփոսի տեսակետով խնդիրը անով աւելի նշանակութիւն կը ստանայ որ շատերէն Միհրի հետ իրաւամբ կը նոյնացուի նաեւ վրական Ամիրանը, որուն առասպելը՝ քանի մը մանրամասնութիւններ դուրս հանելով՝ գրեթէ նոյն է Արտաւազդայ, Շիրարի եւ Մհերի առասպելներու հետ: Թէ Մհերի եւ Ամիրանի միջեւ ներքին սերտ աղերս մ'ըլլալու է, նաեւ անկից կը տեսնուի, որ ինչպէս հայ ժողովրդական զօրջը Մհեր Ահուրու անունով ժայռի մը մէջ փակուած կը համարի, որ կ'ըսուի նաեւ Ագուաու ըսար⁴, նոյնպէս վրական Ամիրանը տարբերակի մը համաձայն փակուած

¹ Անդ. I, էջ 234:
² Զողանց բան պատմականը. էջ 42:
³ Միհր Հայոց մէջ էջ 71 եւն:
⁴ Թ. Աւդալբեկեան, անդ. էջ 83:

Սա-Կորնէ՛ այսինքն՝ Ազոսի լեռան քով (անդ. 83): Գիցարանական այս աչքի զարնող պարագայով հետեւեալ երկու եղբակացու- թիւններու կը յանգինք. նախ թէ Մհերի եւ Ամիրանի առասպելները շատ աւելի հին եւ սկզբնական են քան Արտաւազդինը կամ Շի- դարինը, որոնք դիցաբանական անխառն տարրներ ալ չեն, պատմութիւնն ալ իր որոշ դերն ունի անոնց մէջ¹: Հայ հին մատենագրութեան մէջ Մհերի նկատմամբ որեւէ յիշատակութեան չհանդիպելը՝ անով կրնայ մեկնուիլ, որ լեռան փոխուողը կամ լեռան մէջ փակուողը թերեւս Միհր ինքնին չէր, այլ իր որդին, ինչպէս Կեղծ-Պղբտարբոս կ'աւանդէ: Անոր համար կը համարիմ թէ վաղաժամ է տակաւին Մեծ Մհերը, որ նաեւ Առիւծաձեւ Մհեր կ'ա- նուանուի, Պստիկ Մհերին կամ Մհերիկին հետ նոյնացընել, ինչպէս սովորաբար կը պատահի:

Երկրորդ եղբակացութիւնը առաջնոյն հե- տեւութիւնն է, այսինքն թէ հնութեան մէջ Մհերի առասպելին տարածութեան շրջա- նակը աւելի ընդարձակ եղած ըլլալու է քան որ ժողովրդական գրոյցները կ'աւան- դեն: Ասով կը մերձենանք արդէն Այրարատի երբեմնի պողալիը եւ ծաղկալիը դաշտին եւ կամրջկոտոր Երասխայ քաղցրատեսիլ ափերուն, ուր կը բարձրանայ ամէն հայ սրտի այնչափ մտա Մասիսը: Առասպելը Գիորիտի լեռ անուան տակ ապահով զայս կ'ակնարկէ: Հոս մեզի օգ- նութեան ձեռք կը կարկատէ նախ ինքնին իսկ առասպելը. վասն զի՝ ինչպէս շատ սրամիտ կեր- պով արդէն մտադիր եղած է Ալեշան², *Διόρφοσ* թարգմանութիւն ըլլալու է հայ անուան մը, որ մերձաւորապէս մութ կամ մթին պիտի նշա- նակէր — Ալեշանի կարծիքով *Διόρφοσ* մութը թափանցող միայն կրնայ նշանակել: Արդ Մա- սիս լեռը հայ ժողովուրդէն կ'անուանուի նաեւ մթին լեռ, սեւ լեռ, մառախլապատ լեռ³: Յու- նարէն *ὁ διόρφοσ* բառ մըն ալ կայ, որ կը նշա- նակէ «կրկնատանիք» կամ «ծածկուած բան մը»: Այս բառն ալ կարելի է կարծեմ նկատողութեան առնուլ, քանի որ լեռան փոխուող հերոս ըսելով

¹ Արաբական Շիդարի պատմականութիւնը չ'ըն- դունի թերեւս անոր համար որ մատենագրութիւնը մեկ ցած ոգիներ են: Չանոնք համեմատել կ'ուզէ աւելի իշխարի հետ. որով սակայն ըստմութիւն շեղարներու հարցը կը մնայ դարձեալ լուծման կարօտ, *անդ*, 104:
² Հին հաւատք Հայոց, էջ 36:
³ Անդ. 36. հմտ. նաեւ Fr. Murad, Ararat und Masis, էջ 51, ծն. 1:

ժողովուրդը սովորաբար աւելի լեռան մէջ ծած- կուած կամ փակուած կը հասկընայ: Եւ Մա- սիսի մէջ փակուած է Արտաւազդ՝ յաջորդը այն աստուածագրի հերոսին, որ յունացած կեղծ անունով մը մեզի կ'աւանդուի: Երկու առաս- պելներուն ալ լեռներու նոյնութիւնը տարա- կոյսէ դուրս է. ասոր նոր եւ վերջին փաստն է Գիորիտի հակառակորդը՝ այսինքն Արէոս, որ ինչպէս ուրիշ առթիւ արդէն մտադիր ըրած եմ¹, միայն Արայ Գեղեցիկը կրնայ ըլլալ: Ահա թէ ինչու. Մասիսի ստորոտը տարածուող դաշտը Անանուն եւ անոր հետեւելով նաեւ Խորենացին «Արայի դաշտ» կ'անուանեն. հոն եղած է նաեւ Շամիրամի Արայի դէմ մղած պատերազմը: Արագածի դէպի Այրարատի դաշտը երկարող լեռնաշղթաներէն մին ուղղակի «Արայի լեռ» կը յորջորջուի դեռ մինչեւ այսօր- նոյն լեռան քովերը կը գտնուի Արայի անու- նով գիւղ մը, որ այսօր դժբախտաբար ամ- բողջապէս կործանած է: Կը պատմուի թէ Արայ հոն սպաննուած եւ թաղուած ըլլայ. ճիշտ նոյն գիւղին դիմաց կայ բլուր մը, որ «Շամիրամայ լեռ» յորջորջանքը տակաւին կը կրէ: Քարայր մըն ալ կայ այս կողմերը՝ հիմայ նուիրուած Ս. Առավառիայի, ուր սակայն ուխտի կ'երթան գլխաւորաբար Համբարձման տօնին²: Պէտք չէ հոս յիշել նաեւ աւանդութիւն մը, որուն համաձայն Ասսպուրականի մէջ մի եւ նոյն տօնին առթիւ «կ'ասեն» ամեն յամբարձման գիշեր Մհերի քարի տիւր կը բացուի... Մէկ տա- րեկան խարս ի տեսի... Քարի տիւր բացուի, Մհեր քարի միջէն ել'ր ի»³:

Այս գլուխը չփակած՝ հարկ կը համարիմ անդրադառնալու նաեւ ուրիշ կարեւոր կէտի մը, որուն չափով մը ինձմէ յառաջ արդէն ուրիշ- ներ ալ մտադիր եղած են: «Աչքի է ընկնում, կ'ըսէ Ստ. Կանայեանց»⁴ եւ այս հանգամանքը, եթէ Ազատ Մասիսում արգիլուած է Արաշէսի որդի Արտաւազդը, Ասսպուրականի Տոսպում եւ Ագուաւքարում փակուած է Մհերը իրանց հայրերի անէծքով. աւանդութիւններ, որոնք եթէ նոյն էլ չեն, բայց շատ նման են: Ուրիշ տեղ մը «Աչքի է ընկնում, կ'ըսէ նոյն հեղի- նակը, որ հարաւում յիշուում են անուններ, որ կան հիւսիսում, մասնաւորապէս Այրարատում»:

¹ Կրօնի ծագում եւ Գիցարանութիւն, էջ 210:
² Ալեշան, Արարատ, էջ 161:
³ Մ. Արեղեան, Դատիք եւ Մհեր, էջ 59. առ Գ. Արաբեկեան, *անդ* 79:
⁴ Արբ. 1913. էջ 659:

Այսպէս Արտիմէտ (Խոր. Բ. ԿԵ. 144), Մարա- մատ = Մարմա (Գ. Տէր-Մկրտչեան, Անանիա, էջ 15), Երուանդաւան (Խոր. Բ. ԽԶ. 123) եւ Երուանդաշատ (անդ. Բ. ԼԹ. 117), եւ այլն: Աչքի չի՞ զարներ նաեւ այն հանգամանքը, որ թէ Արարատի եւ թէ Ասսպուրականի ամենա- մեծ լեռները Մասիս կ'անուանուին, մին Ազատ Մասիս, միւսը «Կիս Մասիք», որ ինչպէս Hübschmann¹ արդէն նկատած է, Փաւստոսի «մեծ լեռնն Մասեաց»ի (Գ. Ի. 52) հետ նոյն է. եւ այս՝ Սիսիան լեռն է: Ասոնց վրայ կ'աւել- նայ Արայի առասպելը, որ երկու նահանգներուն մէջ ալ ինքնուրոյն աւանդութիւններով իր տեղերը ունի: Այս աշխարհագրական, ազգախօսական-դիցաբանական զարմանալի երե- տյմները զմեզ ազգային պատմութեան ամենա- հին շրջանները կը փոխադրեն. քաղաքակրթա- կան հետքերն են ասոնք գաղթող եւ բնակու- թիւն փնտոող նախնի շայրուն, որոնք իրենց նոր հայրենիք մտան աւելի հարաւ-արեւմուտ- քէն: Ամէն կողմանէ նեղուած Ռարտացիները թողով յաղթողներուն իրենց սիրելի Տուսպան ու Բիանան՝ գաղթեցին Այրարատայ նահանգը, ուր դեռ բաւական ժամանակ մնացին իրենց առանձին թագաւորներով ու քաղաքներով: Բայց Հայերը զերեք ասկից ալ վաճակեցին. մաս մը հաւանօրէն Կաւկասեան լեռները ապաւինե- ցան եւ մաս մըն ալ Բարձր Հայքի եւ Տայքի վրայէն յետոյ իրենց անունով Խաղտիք կոչուած երկիրը անցան:

ԳՈՅՏ. Հ. Ա. ՄՍՏՈՒՆՅԱՆ



¹ Arm. Ortsnamen, էջ 324, 370, 396. հմտ. նաեւ Ազգ. Ման. Եր. Վիեննա, 1907, էջ 187, 260:

ՖԵԼԻՔՍ ՕՍՎԱԼԴ
ԵՐԿՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԳԵՐՄ. ԹՐԳՄ.
ՕՏՏՈՅ ՎԻԼՔԷՆՍ
ԳԵՐՄԱՆՆԵՐԷՆ ԲՆԱԳՐԷՆ ՓՈԽԱԳՐՈՒՄԾ ՀԱՅԵՐԷՆԻ
(Շարունակութիւն):
Բ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱՐԱՀԱՐԹԸ

27. — Հիւսիսային եւ հարաւային եղբայրներէ պարփակուած շրջանակը Սա- րահարթի մը յատկանիշները կը ցուցընէ: Սակայն շատ լաւ կը թոյլատրէ՝ անդրազոյն բաժանում ընելու: Յայտնի է թէ, — երբ շոշափողական (tangential) անդիմադրելի ճ'նշում մը գործուի դիմացկուն լայն զան- գուածի մը վրայ, եւ ասի միայն այն կերպով տեղի տայ որ իրարու վրայ անցնող հողաբա- ժինները խորտակէ, — հողաբաժիններուն ասկէ ծագող վերամուղ ճ'նշումը պէտք է որ դուրսը սաստկագոյն, իսկ անգործ զանգուա- ծին դէպ ի ներսն երթալով նուազագոյն ըլլայ: Ուստի երբ ճ'նշումը տեւական ըլլայ, արտաքին հողաբաժինները հետեւաբար պիտի ջանան իրենց ներքին շուրթն աւելի մեծագոյն բարձրութեան մը մղել հանել քան թէ կենդրոնական հողաբաժինները: Այսպէս ալ եղբայրանց մէջ հողաբաժին- ներուն գազաթնաշղթունք կը հասնին 3000—3700 մետր բարձրութեանց, մինչ- դեռ Կենդրոնական Սարահարթին գազաթ- ները միջին հաշուով 1500 է մինչեւ 1800 մետր բարձրութեանց վրայ կը մնան, (ի բաց առնելով հրաբուղիներուն բարձրակուտակ կոները):

Հայաստանի հիւսիսային կիսուն մէջ կարելի է երկու զօտիներ զանազանել, որոնց նկարագիրը միջին է եղբայրանց ու կենդրո- նական սարահարթին միջեւ, այսինքն՝